ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



Անձնագիրը

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզը տարածվում է 5348 քառակուսի կիլոմետրի վրա, որից մոտ 1370 քառակուսի կիլոմետրը զբաղեցնում է Սեւանա լճի հայելին: Գեղարքունիքը ծովի մակարդակից գտնվում է 1325-3597 մետր բարձրության վրա:

Գեղարքունիքն արեւելքից սահմանակից է Ադրբեջանի Հանրապետությանը, հարավից՝ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի, արեւմուտքից՝ Արարատի եւ Կոտայքի, հյուսիսից՝ Տավուշի մարզերին: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արեւմուտքից հարավ-արևելք կազմում է 115, արեւմուտքից արեւելք՝ 85 կիլոմետր: Մարզն իր մեջ ընդգրկում է Գավառի, Ճամբարակի /նախկին՝Կրասնոսելսկ/, Մարտունու, Սեւանի եւ Վարդենիսի տարածաշրջանները: Գյուղատնտեսության համար պիտանի հողատարածությունը մարզում կազմում է 240 հազար 33 հեկտար: Գեղարքունիքը Հայաստանի Հանրապետության՝ տարածքով ամենախոշոր մարզն է, որը զբաղեցնում է ՀՀ ընդհանուր տարածքի 18 տոկոսը: Գեղարքունիքը տարանցիկ գոտի է մերձավորարեւելյան եւ եվրոպական ու ասիական բազմաթիվ երկրների համար: Իրանից դեպի Սեւծովյան ավազանի երկրներ տանող ամենակարճ ճանապարհն անցնում է Սեւան-Մարտունի-Գետափ եւ Սեւան-Դիլիջան երթուղով:

Մարզն ունի 5 խոշորացված համայնք եւ 98 բնակավայր, 249 հազար 332 բնակիչ՝ հիմնականում հայախոս: Բնակչության խտությունը կազմում է 44.5 մարդ՝ 1 քառակուսի կիլոմետրի վրա: Մարզի բնակչության մեծ մասը՝ 158.400-ը կամ 66.5 տոկոսը բնակվում են գյուղական բնակավայրերում: Բնակչության թվաքանակում տղամարդիկ կազմում են 48.2, կանայք՝ 51.8 տոկոսը: Մարզկենտրոնը գտնվում է Գավառ քաղաքում: Գավառում է տեղակայված Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի շենքը: Գեղարքունիքի մարզպետարանը հիմնադրվել է 1996 թվականից եւ իրականացնում է պետական կառավարումը մարզի վարչական տարածքում: Գավառ քաղաքում է գտնվում Հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմը, որի Մայր եկեղեցին համարվում է Սուրբ Աստվածածինը:

Խոշորացված մյուս համայնքներն են՝ Սեւանը, Մարտունին, Վարդենիսը եւ Ճամբարակը: Գյուղական խոշոր բնակավայրեր են համարվում Ներքին Գետաշենը, Վարդենիկը, Սարուխանը, Զոլաքարը, Երանոսը, Նորատուսը, Կարմիրգյուղը, Լիճքը, Աստղաձորը, Վերին Գետաշենը, Գեղհովիտը, Ծովագյուղը, Լճաշենը, Ակունքը, Գանձակը, Վաղաշենը, Ձորագյուղը, որոնց բնակչության թիվը տատանվում է 4 հազարից մինչեւ 10 հազարի սահմաններում:

Զբաղմունքը

Բնակչության հիմնական զբաղմունքը կազմում են գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, առեւտուրը, փոքր եւ միջին ձեռնարկատիրությունը, ձկնորսությունը, պետական ու հանրային ծառայությունները եւ արտագնա աշխատանքը:

Զբաղվածության ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը, որի հիմնական ճյուղերը կազմում են անասնապահական մթերքների, մեղրի,

կարտոֆիլի, հացահատիկի, կաղամբի, բանջարբոստանային այլ մշակաբույսերի եւ պտղի արտադրությունները: Մարզի տարածքում գործում են մոտ 40 հազար

գյուղացիական փոքր, միջին կամ խոշոր տնտեսություններ, 42 համայնքներում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներ:

2023 թվականի հունվարի դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում են 31 արտադրական ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն «ԳեոՊրոՄայնինգ» «Աքվատիկ», «Սեւանի հացի գործարան», «Հրանդ Կարապետյան», Ակունքի «Էկոկաթ», Գավառի «Սեւան», Լճաշենի «Արա-Արեգ» եւ մի շարք այլ արտադրական ձեռնարկություններ: 2022 թվականին Գեղարքունիքի մարզում թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ գներով կազմել է 71 միլիարդ 307 միլիոն դրամ, գյուղատնտեսական համախառն արտադրանքը՝ 119,1 միլիարդ դրամ: Մարզում գործում են 529 առեւտրային ձեռնարկություններ, այդ թվում՝ 2 սպառողական ապրանքների եւ 2 գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ: Արտագնա աշխատանքով զբաղված են ավելի քան 35 հազար մարդ, ովքեր սեզոնային աշխատանք են կատարում Ռուսաստանի Դաշնությունում եւ ԱՊՀ այլ երկրներում, հիմնականում՝ շինարարության ոլորտում:

Արդյունաբերության մեջ զարգացող ճյուղ է հանքարդյունաբերությունը, որի մեջ մեծ է Սոթքի ոսկու հանքավայրի շահագործման դերն ու նշանակությունը: Արդյունահանվում է նաեւ որոշակի քանակության շինանյութ՝ բազալտ, ավազ, կրաքար: Տորֆի առատ պաշարներ կան Վարդենիսի տարածքում:

Կարճաղբյուր եւ Լիճք գյուղերում արդեն կառուցվել եւ գործում են գերժամանակակից սարքավորումներով հագեցած ձկնաբուծարաններ: Իր արտադրողականությամբ Կարճաղբյուրի ձկնաբուծական գործարանը մի քանի անգամ գերազանցում է ԽՍՀՄ տարիներին Սեւանա լճի ավազանում գործող չորս մանրաձկան գործարանների արտադրողականությանը: Արդեն ստեղծվել է Սեւանի իշխանի 6100 հատ մայրական կազմ: Սեւանա լճում սկզբնավորվել է ցանցավանդակային ձկնաբուծությունը:

Կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն

Գեղարքունիքի մարզում գործում են մեկ պետական համալսարան, միջնակարգ մասնագիտական ութ հաստատություն, 125 հանրակրթական դպրոց, 39 առողջապահական ձեռնարկություն՝ 3 բժշկական կենտրոն, 2 պոլիկլինիկա, 1 ստոմատոլոգիական պոլիկլինիկա, 1 հիվանդանոց, 1 ծննդատուն, 1 առողջության կենտրոն, 30 բուժամբուլատորիա և առողջության առաջնային պահպանման կենտրոն, մեկ պետթատրոն, 3 թանգարան, Հայաստանի պետական պատկերասրահի 2 մասնաճյուղ, 1 մարզային, 5 քաղաքային, 63 գյուղական գրադարաններ, 8 երաժշտական, 1 դուդուկի, 6 արվեստի, 3 գեղարվեստի դպրոցներ, 3 մանկական ստեղծագործական կենտրոն, 1 գեղագիտական կենտրոն, 1 երաժշտական քոլեջ, 9 մարզադպրոց, 73 մշակույթի տներ և ակումբներ, չորս տասնյակից ավել մանկապարտեզներ եւ նախակրթարաններ:

Թատերական հարուստ ավանդներ ունեցող Գավառ քաղաքում գործում է Լ. Քալանթարի անվան պետթատրոնը, որի նորակառույց շենքն ունի գերժամանակակից պայմաններ: Գավառի երկրագիտական թանգարանում պահվում եւ ցուցադրվում են մարզի պատմությանը վերաբերող հարուստ նյութեր, որտեղ ներակայացված են պատմությանը հայտնի բոլոր դարաշրջանները:

Հարուստ է նաեւ Սեւանի բնապահպանական թանգարանի հավաքածուն, որտեղ ներկայացված են Սեւանի ավազանի ջրային ու ցամաքային կենդանական աշխարհը, թռչնաշխարհը, մշակութային բազմաբովանդակ արժեքներ:

Կապ եւ հաղորդակցություն

Գեղարքունիքի մարզում գործում է ինչպես լարային, այնպես էլ բջջային հեռախոսակապ, որը հնարավորություն է տալիս՝ ցանկացած պահի կապ հաստատել աշխարհի բոլոր երկրների հետ: Բջջային եւ ինտերնետ կապով ապահովված են մարզի բոլոր համայնքները:

Մարզն ունի 1366 կիլոմետր երկարության ճանապարհային ընդհանուր ցանց, որից շուրջ 816 կիլոմետրը կազմում են միջպետական, հանրապետական ու մարզային, շուրջ 550 կիլոմետրը՝ համայնքային նշանակության ճանապարհները: Գեղարքունիքը հարավից Մարտունի-Գետափ ճանապարհով կապվում է Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի եւ Սյունիքի ու Իրանի Իսլամական Հանրապետության, հյուսիսից՝ Սեւան-Դիլիջան ճանապարհով՝ Հայաստանի հյուսիսային մարզերի եւ Վրաստանի Հանրապետության եւ արեւմուտքից՝ Երեւան-Սեւան ճանապարհով՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, մայրաքաղաք Երեւանի եւ Արարատյան դաշտավայրի բնակավայրերի հետ: Միջպետական ու հանրապետական նշանակության բոլոր ճանապարհները հիմնականում գտնվում են նորոգված ու բարեկարգ վիճակում, իսկ մարզային եւ ներհամայնքային նշանակության ճանապարհները հիմնանորոգման կարիք ունեն:

Սեւանա լիճը

Վարդենիսի, Գեղամա, Փամբակի, Սեւանի, Արեգունու եւ Արեւելյան Սեւանի բարձրաբերձ լեռնաշղթաների հսկայական թասի մեջ, ծովի մակարդակից 1900, 27 մետր բարձրության վրա է գտնվում աշխարհի ամենախոշոր քաղցրահամ լճերից մեկը՝ Սեւանը: Այն համարվում է հայ ժողովրդի գլխավոր խորհրդանիշերից եւ ուխտավայրերից մեկը: Հսկայական է նաեւ Սեւանի համաշխարհային ու համամարդկային նշանակությունը, քանի որ այն մի կողմից խմելու ջրի հսկայական պաշարներով հարուստ ջրամբար կարող է ծառայել Կովկասի եւ Մերձավոր Արեւելքի երկրների համար, մյուս կողմից՝ հանդիսանում է բնական ու անկրկնելի առողջարան՝ իր անսպառ հնարավորություններով, զանազան գրավչություններով: Սեւանը շրջապատված է քաղաքային ու գյուղական բնակավայրերով, հարմարավետ հյուրանոցներով, տուրիստական հանգրվաններով ու տաղավարներով, լողափերով, արհեստական անտառներով , ճանապարհային եւ երկաթուղային ցանցերով: Սեւանա լիճը սնում են 28 գետեր ու գետակներ, որոնց մեջ առավել ջրառատ գետեր են համարվում Արգիճին, Գավառագետը, Մասրիկը, Ձկնգետը, Մաքենիսը, Վարդենիսը: Սակայն 1981թվականից լիճը սնող հիմնական երակը 48 կիլոմետր երկարություն ունեցող

Արփա-Սեւան թունելային ջրատարն է, որով տարեկան լիճ է տեղափոխվում 250-270 միլիոն խորանարդ մետր ջուր:

Գետային ավազանները հարուստ են կենդանական եւ բուսական աշխարհի բազմազանությամբ, բնության եւ պատմության հուշարձաններով:

Վայրի պտուղներից առավել արժեքավոր են փշարմավը եւ մասուրը, որոնք լայնորեն օգտագործվում են ինչպես սննդի, այնպես էլ՝ ժողովրդական եւ կիրառական բժշկության մեջ: Տասնյակ հազարավոր հեկտարների վրա տարածված ալպյան մարգագետինները հարուստ են ուտելի բանջարեղենի բազմաթիվ տեսակներով, հյութալի անասնակերով եւ մոտ 300 տեսակի արժեքավոր դեղաբույսերով:

Հարուստ է նաեւ Սեւանի ավազանի կենդանական աշխարհը: Կարգաբանական առումով այստեղ հանդիպում են թռչունների 267, կաթնասունների 34, երկկենցաղների 3, սողունների 17 եւ ձկների 9 տեսակներ:Սեւանա լճում արդյունագործական նշանակություն ունի սիգ ձկնատեսակը:

Կլիման եւ ռելիեֆը

Գեղարքունիքի մարզի կլիման աչքի է ընկնում ցրտաշունչ ձմեռներով եւ զով ամառներով, քանի որ մարզն ընդհանուր առմամբ գտնվում է ծովի մակերևույթից 2000-3500 մ բարձրությունների վրա: Գեղարքունիքի մարզը բնութագրվում է շատ առատ արեւափայլով, որի տարեկան միջին տեւողությունը հասնում է ավելի քան 2700-2800 ժամի կամ մոտ 300 օրվա : Ընդհանուր առմամբ կլիման ամռանը

չափավոր է , իսկ ձմռանը՝ չափավոր ցուրտ: Բնութագրվում է ամենամյա եւ հաստատուն ձյունածածկույթով: Ամառը տաք է, գերիշխում են քիչ ամպամած եղանակները, մթնոլորտային տեղումները շատ չեն: Գրեթե մշտական եւ ուժեղ քամիների ազդեցության տակ են Սոթքի, Սեմյոնովկայի, Վարդենյաց լեռնանցքները, մարզի լեռնային ու հարթավայրային գոտիները: Արեւային օրերի երկար տեւողությունը եւ մշտական քամիների առկայությունը նպաստավոր են մարզում այլընտրանքային էլեկտրաէներգիայի արտադրության կազմակերպման համար:

Ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է՝ 1325 մետր, ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը՝ 3598 մետր: Բարձր լեռնագագաթներն են՝ Սպիտակասարը՝ 3555 մետր, Վարդենիսը՝ 3522 մետր, Գեղասարը՝ 3446 մետր:

Ամենաերկար ու ջրառատ գետերն են՝ Արգիճին 51 կիլոմետր, Գավառագետը ՝ 47 կիլոմետր եւ Մասրիկը՝ 45 կիլոմետր: Աժդահակ եւ Արմաղան լեռնագագաթների գոգավորություններում ծփում են մինչեւ 50 մետր տրամագծով եւ 15 մետր խորությամբ լճակներ:Գոգավորության հյուսիսային մասով ձգվում են Արեգունու, հյուսիս-արեւելյան մասով՝ Սեւանի լեռնաշղթաները, արեւելյան մասով՝ Արեւելյան Սեւանի լեռնաշղթան, որը հարավից միանում է Վարդենիսի լեռնաշղթային: Արեւմուտքից եւ հարավից մարզի տարածքը երիզում է Գեղամա լեռնաշթան՝ Վարդենյաց լեռնանցքում միանալով Վարդենիսի լեռնաշթային: Արեւմտյան կողմից, Սեւանի թերակղզուն հանդիպակաց, մարզը երիզում է Փամբակի լեռնաշթան: Եթե Արեգունու եւ Սեւանի լեռնաշղթաների լանջերը զառիթափ են ու կտրտված, ապա Գեղամա եւ Վարդենիսի լեռնաշղթաների՝ դեպի Սեւանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են, որտեղ այդ լեռների բազմաթիվ հրաբխային կոներից դուրս ժայթքած լավան հրաբխային լեռնալանջերից բացի առաջացրել է նաեւ սարավանդներ, քարակարկառներ: Մարզի հենց այս հատվածներում էլ՝ Գեղամա եւ Վարդենիսի լեռնաշղթաների ու Սեւանա լճի միջեւ գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, որոնք շատ հարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200 մետր բարձրություն: Մասրիկի հարթավայրը, որը փռված է մոտ 30 հազար հեկտար տարածքի վրա, համարվում է մարզի հացահատիկի եւ կարտոֆիլի արտադրության գլխավոր շտեմարանը:

Գեղամա եւ Վարդենիսի լեռնաշղթաների գոգավորությունում, դարձյալ մոտ 30 հազար հեկտարի վրա, փռված է Ագրիջայի սարահարթը, որը համարվում է մարզի անասնապահության գլխավոր շտեմարաններից մեկը: Սեւանա լճի հարավային եւ արեւմտյան առափնյա հարթ տարածությունները բնութագրվում են լեռնատափաստանային բերրի սևահողերով, իսկ համեմատաբար բարձրադիր մասերը՝ լեռնամարգագետնային հողերով:

Բուսական աշխարհը

Բուսատեսակների մեջ գերակշռում են լեռնատափաստանային , ենթալպյան և ալպյան բուսատեսակները: Վերջիններս հատկապես տարածված են Գեղամա, Վարդենիսի ու մյուս լեռնաշղթաների լեռնալանջային , բարձր լեռնային մասերում, որոնք էլ հանդիսանում են ամառային արոտավայրեր ու խոտհարքներ: Սեւանի ավազանում հաշվվում է բույսերի մոտ 1600 տեսակ: Մարզը հարուստ է նաեւ սնկերի եւ քարաքոսերի տեսակներով:

Անտառները զբաղեցնում են մոտ 24.000 հեկտար տարածք, որոնցից մոտ 18.000-ը Սեւանա լճից ժամանակին ազատված մասերում տնկված արհեստական անտառներն են: Բնական անտառները տարածված են Գետիկում, 6.000 հեկտարի վրա: Բացառիկ բնապահպանական ու կենսական նշանակություն ունեն Դարանակի եւ Ծափաթաղի կաղնու եւ գիհու նոսր անտառները, որոնք աճում են ծովի մակերեւույթից մոտ 2000 մետր բարձրության վրա եւ առաջացել են Մեծ սառցապատումից առաջ: Բնական եւ արհեստական անտառներում աճում են բարդի, թխկի, կաղնի, հացենի, ուռի, լորենի, սոճի, փշարմավենի, փշատենի, վայրի սալորենի, տանձենի, գիհի եւ այլ ծառատեսակներ:

Սեւանա լճի մակարդակի բարձրացման հետեւանքով անտառային տարածքները վերջին տարիների ընթացքում կրճատվել են ավելի քան 2000 հեկտարով:

Պատմաճարտարապետական եւ բնության հուշարձաններ, պատմական բնակավայրեր

Գեղարքունիքի մարզում մարդիկ բնակություն են հաստատել անհիշելի ժամանակներից: Պետական պահպանության ցանկում հաշվառված է 10.000 մանր ու մեծ հուշարձան, որոնք թվագրվում են հին քարե դարից մինչեւ նորագույն ժամանակները: Դրանք հիմնականում գոյություն ունեն հին քարե գործիքների, հնագույն ժայռապատկերների, ուրարտական սեպագիր արձանագրությունների, ռազմական ամրոցների ավերակների, լեռան փեշերով փորված հնագույն ջրանցքների, հեթանոսական դամբարանների, ռազմակառքերի, բրոնզե եւ երկաթե գործիքների, վանքերի, մատուռների, եկեղեցիների եւ խաչքարերի, պեղածո կամ

գտածո այլ նյութերի տեսքով: Մարզի համայնքների հիմնական մասի պատմությունը նույնպես ձգվում է մինչեւ հազարամյակների խորքերը, իսկ հնավայրերի եւ հնագիտական պեղածո կամ գտածո արժեքները փաստում են հայ բնակչության՝ իր հայրենիքում հազարամյակների ընթացքում ապրելու եւ արարելու մասին:

Մարզկենտրոն Գավառ քաղաքի հիմնադրման սկիզբը համարվում է մ.թ.ա. 735 թվականը: Այս մասին հիշատակում է Վանի թագավոր Ռուսա Առաջինի թողած սեպագիր արձանագրությունը, որը հայտնաբերվել է «Բերդի գլուխ” կոչվող ամրոցի ավերակներից, սակայն քաղաքի վարչական տարածքում գտնվող որոշ հնավայրեր, ինչպես նաեւ գտնված քարե գործիքները խոսում են բնակավայրի շատ ավելի վաղ կազմավորվելու մասին: Գավառ քաղաքում են գտնվում Սուրբ Կարապետ եւ Սուրբ Աստվածածին եկեղեցիները,

որոնք կառուցվել են 1850- 1905 թվականների ընթացքում, տեղի բարերարների միջոցներով: Քաղաքի եւ մարզի պատմությանը խորությամբ կարելի է ծանոթանալ քաղաքի երկրագիտական թանգարանում, որտեղ ցուցադրվում են քարե դարից մինչ մեր օրերի նյութական ու հոգեւոր մշակութային արժեքների բացառիկ ու զանազան նմուշներ: Պատմական մեծ արժեք են ներկայացնում 9-րդ դարի կառույց համարվող Գավառի Հացառատ թաղամասի Սուրբ Աստվածածին եկեղեցին եւ «Մրթբի Ձոր» կոչվող տարածքի հնագույն դամբարանները: Գավառն ունի իր ֆոլկլորին յուրահատուկ խոհանոց, որոնց մեջ առանձնանում են քյուֆթան եւ փախլավան:

Սեւան քաղաքի վարչական տարածքում է գտնվում Սեւանի թերակղզին, որը համարվում է հայ ժողովրդի գլխավոր սրբավայրերից եւ ուխտավայրերից մեկը: Հեթանոսական հին մեհյանի հիմքերի վրա այստեղ բարձրացել է Գրիգոր Լուսավորչի պատվերով կառուցված քրիստոնեական առաջին վանական համալիրներից մեկը,

որտեղ եւ բացվել ու գործել է դպրանոց՝ հետագա դարերում եւս պահպանելով իր նշանակությունը: Սուրբ Կարապետ եւ Սուրբ Առաքելոց եկեղեցիները կառուցվել են Բագրատունյաց գահի հիմնադիր Աշոտ Առաջինի դուստր Մարիամ իշխանուհու կողմից: Այսօր էլ այստեղ գործում է Վազգենյան հոգեւոր դպրանոցը, որը Հայ Առաքելական եկեղեցու սպասավորներ է պատրաստում: Սեւան քաղաքի նշանավոր շինություններից է Սեւանի հիդրոէլեկտրակայանը, որը Հայաստանի տնտեսական ու էներգետիկ առաջին գլխավոր կառույցներից մեկն է համարվում:

Ուշադրության է արժանի «Սեւան ազգային պարկի” բնագիտական թանգարանը, որտեղ ցուցադրվում են Սեւանի ավազանի

ձկնաշխարհի, թռչնաշխարհի, կաթնասունների, բույսերի, հնագիտական իրերի եզակի հավաքածուներ:

ԼՃաշենը որպես բնակավայր գոյություն ունի մարդկության պատմության անհիշելի ժամանակներից եւ հայտնի է պատմական հարուստ ու բազմազան նյութերով: Այստեղ են պահպանվում կիկլոպյան դարաշրջանի ռազմական ամրոցի պարիսպների ավերակները, Ուրարտուի արքա Արգիշտի Առաջինի սեպագիր արձանագրությունը, տեղանքով մեկ սփռված հնագույն դամբարանադաշտերը, որոնցից պեղված նյութերի մեջ առանձնանում են զինագործական, խեցեգործական իրերը, պերճանքի առարկաները, կենցաղային իրերը, գյուղատնտեսական գործիքները, փայտյա, մետաղյա եւ քարե փորագրությունները՝ գաղափար տալով մեր հեռավոր նախնիների բարձր եւ ինքնատիպ մշակույթի եւ քաղաքակրթության մասին:

Դդմաշենի եկեղեցին մեզ է հասել յոթերորդ դարից:Իսկ ժամանակակից եկեղեցաշինության մեջ գրավիչ է երեւում Ծաղկունքի նորակառույց եկեղեցին՝ թառած Փամբակ լեռան բարձրադիր ստորոտի վրա: Այն կառուցվել է 2003-2006 թվականների ընթացքում, հնագույն սրբավայրի եւ միջնադարյան մատուռի հիմքերի վրա:



Հայրավանքը ոչ միայն հայկական վանքաշինության գլուխգործոցներից մեկն է, այլ՝ Գեղամա աշխարհի հնագույն բնակավայրերից մեկը: Նրա շուրջ են տարածվում պատմական Ազատ քաղաքի ավերակները, քարե եւ վաղ երկաթե դարի ամրոցի եւ բնակատեղիների ավերակները: Հայրավանքից քիչ հեռու, հյուսիսային հատվածում, պահպանվել են Բերդկունք ամրոցի մնացորդները:

Մշակութային հարուստ ժառանգություն է պահպանվել Նորատուսում: Պատմաճարտարապետական բացառիկ ու շքեղ ոճերի միջնադարյան երկու եկեղեցիների՝ Սուրբ Աստվածածնի եւ Գրիգոր Լուսավորչի կողքին այստեղ առավել արժեւորվում են հայկական խաչքարարվեստի՝ հազարի հասնող քանդակազարդ ու պատկերազարդ քարե կոթողները: Նորատուսի խաչքարերը հռչակված են աշխարհով մեկ, եւ այսօր էլ դրանք ավելանում են քարագործ եւ քանդակագործ նոր վարպետների ջանքերի շնորհիվ:

Կարմիրգյուղի վարչական տարածքում , Սեւանա լճի ափին է փռված Քանագեղի հնավայրը, որտեղ պահպանվել են հազարամյակների պատմության կնիքը կրող շինություններ, դամբարաններ, մատուռներ, վանքեր, խաչքարեր: Այստեղի բացված մի դամբարանից հնագետները գտել են մ.թ.ա. 2-րդ հազարամյակում գոյություն ունեցած Միտտանիի թագավորության կնիքը, որը պահվում է Հայաստանի պատմության թանգարանում:

Ձորագյուղը հնում հռչակված է եղել Շողագա անվամբ, որը ժամանակին եղել է նաեւ Մարիամ Բագրատունու կալվածքն ու նստավայրը: Մարիամ իշխանուհու բարերարությամբ 9-րդ դարում այստեղ վեր են բարձրացել վեհաշուք երկու կառույց՝ Շողագավանքն ու Մասրուց Անապատ եկեղեցին: Շողագավանքի հարեւանությամբ գտնվող մի մատուռում են ամփոփված Մարիամ իշխանուհու մասունքները: Ձորագյուղի վարչական տարածքում, Գեղամա լեռնաշթայի ստորոտում, գյուղից մի քանի կիլոմետր հեռավորությամբ է գտնվում հնագույն ռազմական բերդ-ամրոց Սանգյառը, որի պարիսպները ձգվում են մի քանի կիլոմետր երկարությամբ: Ձորագյուղի եւ Ծակքարի սահմանաբաժանում է գտնվում բնության անկրկնելի մի հուշարձան՝ բնական քարե կամուրջը, որտեղից էլ առաջացել է Ծակքար անվանումը:

Ներքին Գետաշենը պատմական Գեղարքունիք գավառի իշխանանիստ Կոթ քաղաքի տարածքում է վերաշինվել ու զարգացել: Պատմաճարտարապետական ու հնագիտական մեծ արժեք ունեն Կոթա հռչակավոր ու նորանորոգ վանքը, նրա շրջակայքում պահպանված պատմական գերեզմանոցները՝ մի քանի հարյուրի հասնող բարձրարվեստ խաչքարերով, և հնագույն բազմաթիվ դամբարանադաշտերը, որտեղից պեղված նյութերը՝ ռազմական կառքեր, զենքեր, զարդեր, այլ արժեքներ, պահպանվում են Հայաստանի Պատմության պետական թանգարանում: Ներքին Գետաշենով է հոսում Սեւանա լիճ թափվող ամենաջրառատ գետը՝ Արգիճին:

Վարդենիսի եւ Գեղամա լեռնաշղթաների սահմանաբաժանից,Մարտունի-Գետափ ավտոճանապարհից արեւմուտք եւ Արմաղան լեռան հարավային ու արեւմտյան թեւերում, մոտ 30 հազար հեկտարի վրա տարածվում է մարզի անասնապահության գլխավոր շտեմարանը՝ Ագրիջայի սարահարթը: Ամռան ամիսներին այն դառնում է ոչ միայն յայլաղատեղի եւ գյուղատնտեսական աշխատանքների եռուզեռով ապրող վայր, այլ նաեւ

զբոսաշրջության ու լեռնագնացության, ձկնորսության ու որսորդության, այլ հետաքրքրությունների զարմանահրաշ աշխարհ: Բնության եւ պատմության անքանակ հուշարձանախմբերի թագն իր գլխին կրում է Արմաղան լեռը, որը տեսնողին հմայում է եւ հեռվից, եւ մոտիկից, եւ գագաթից:

Այստեղից կարելի է զմայլվել ոչ միայն բնական հրաշք լճակով ու նորակառույց վանքով, այլ նաեւ ափի մեջ բոլորեքյան երեւացող հրաշագործ բնությամբ, Սեւանա լճով, բնակավայրերով, հանդիպակաց սարերով ու լեռնագագաթներով: Նման պատկերներ բացվում են նաեւ մարզը գոտեւորող մյուս լեռնագագաթներից, առավելապես՝ Աժդահակ եւ Վարդենիս լեռների կատարներից, որոնք Արմաղանից բարձր են մոտ 700 մետրով:

Մարտունի քաղաքով է անցնում Իրան-Վրաստան միջպետական նշանակության ճանապարհը: Քաղաքի տարածքում գործում են ռեստորաններ, հանգստյան տուն եւ հյուրանոցային ժամանակակից շինություններ, խանութներ, սպասարկման այլ կետեր: Մարտունիում եւս քիչ չեն հին ու նոր պատմաճաարտարապետական հուշարձանները, առողջապահական, կրթական եւ մշակութային օջախները, հնավայրերը, որոնց մեջ առանձնանում են քաղաքի հարավային թեւի բլրի վրա գտնվող եւ մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակում թվագրող ամրոցի եւ հնավայրի ավերակները, Գոմեր կոչվող հանդամասի բերդաքաղաքի հետքերն ու միջնադարյան գերեզմանոցի խաչքարերը: Մարտունի քաղաքի հարավարեւելյան թեւում տարածվում է բնության սքանչելի հուշարձաններից մեկը՝ Մթնաձորը: Ջրվեժի, լեռնային արագահոս ու գահավիժող վտակների, բարձրաբերձ ու բացառիկ ժայռախմբերի, բարձրաբերձ լեռնագագաթների ու անդնդախոր ձորերի, քարավանային ճանապարհների հետքերի կողքին տպավորիչ է նաեւ մարդկային ձեռակերտ ու հնաբույր հուշարձան հանդիսացող եւ լեռան փեշով մեկ 18 կիլոմետր երկարությամբ ձգվող ջրատարը, որը սերունդների հիշողության մեջ մնացել է Հեսրի առու՛ անվամբ: Այն կառուցվել է ուրարտական կամ նախաուրարտական դարաշրջանում եւ այժմ էլ ջուր է մատակարարում Մարտունի քաղաքին եւ Վաղաշեն գյուղին:



Զոլաքար գյուղում է գտնվում մարզի խաչքարարվեստի ամենաբարձր հուշարձան-խաչքարը, որը կերտվել է 13-րդ դարում եւ ունի մոտ հինգ մետր բարձրություն:

Վարդենիկը Գեղարքունիքի մարզի ամենամեծ գյուղական բնակավայրերից է՝ ավելի քան 10 հազար բնակչությամբ: Գյուղը գրավիչ է ոչ միայն իր ժամանակակից ու նորակառույց առանձնատներով, նորոգված փողոցներով ու կրթամշակութային շենքերով, այլ նաեւ պատմաճարտարապետական հուշարձաններով եւ սքանչելի բնապատկերներով: Վարդենիկի տարածքում պահպանված պատմական հուշարձանների մեջ առանձնանում է գյուղի նորակառույց եկեղեցին, որը վեր է բարձրացել միջնադարյան եկեղեցու հիմքերի վրա՝ առանց վերջինիս նախկին տեսքը խաթարելու: Պեղումների ժամանակ եկեղեցու հողածածկ պատի մեջ հայտնաբերվել է Արտաշիսյան սահմանաքար՝ Հայոց արքա Արտաշես Առաջինի հիշատակությամբ պահպանված արամեատառ արձանագրությամբ: Մի ուրիշ աշխարհ ու գեղեցկություն է բացվում Վարդենիկի Իշխանավանքի ձորում, որով հոսում է Վարդենիս գետը: Իրար վրա շերտ առ շերտ ու համաչափ կիտված քարերն այնպես են դասավորված, որ մարդկային կառուցող ձեռքերն այդչափ բծախնդրորեն ու ճշգրիտ հաշվարկով դժվար թե դասավորեին դրանք: Սքանչելի են նաեւ գյուղի հարավային թեւում տարածվող լեռնալանջերը, ձորերն ու սարահարթերը, ժայռախմբերը, որոնք ավարտվում են Գեղարքունիք-Վայոց ձոր սահմանաբաժանում:

Ծովինար-Արծվանիստ գյուղերի սահմանաբաժանում է գտնվում Արփա-Սեւան թունելային ջրատարի ելքը, որի հարեւանությամբ, մոտակա ժայռին, պահպանվել է ՈՒրարտուի արքա Ռուսա Առաջինի սեպագիր արձանագրությունը՝ տարածքը նվաճելու եւ նոր բերդաքաղաք կառուցելու մասին: Իսկ բերդաքաղաքի՝ պատմական Օձաբերդի ավերակները տարածվում են հարավային բլրի վրա: Լավ պահպանվել են ինչպես պարիսպների պատերի հիմքերը, այնպես էլ՝ միջնաբերդի պատերի հետքերը:

Արփա-Սեւան թունելային ջրատարի ելքից մոտ 1 կիլոմետր դեպի հարավ-արեւելք, Արծվանիստ գյուղի գողտրիկ ձորակի մեջ, վեր է խոյանում միջնադարյան հայկական ճարտարապետության գլուխգործոցներից մեկը՝ Վանեվան վանական համալիրը, որը կառուցվել է 903 թվականին, հայոց սպարապետ Շապուհ Բագրատունու պատվիրատվությամբ: Հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ այստեղ է թաղված հայոց արքա Սմբատ Առաջինի մարմինը:

Կարճաղբյուրը մարզի հնագույն բնակավայրերից մեկն է: Այստեղ էլ պահպանվել են հին ամրոցների հետքեր եւ դամբարաններ, խաչքարեր ու մատուռներ, որոնց մեջ առանձնանում է քարե դուռ կրող մատուռը, որն, ի դեպ, Գեղարքունիքի մարզում հայտնաբերված մի քանի տասնյակ Արտաշեսյան

սահմանասյուներից մեկն է՝ հետագա ժամանակների վարպետների կողմից հարմարեցված քարե դռան: Այն իր վրա կրում է Արտաշես Առաջինի՝ հողաբաժանության մասին սահմանող արամեատառ արձանագրությունը:

Ծովակն այն բնակավայրերից է, որտեղ պահպանվել է ՈՒրարտուի արքա Ռուսա Առաջինի սեպագիր արձանագրությունը՝ տարածքի նվաճման եւ շինարարական աշխատանքների մասին: Հսկա քարերից կառուցված բերդ-ամրոցի պահպանված հիմքերն ու պատերն այսօր էլ խոսում են մեր հեռավոր նախնիների պաշտպանական ձգտումների եւ ռազմական արվեստին տիրապետելու մասին: Ծովակից մոտ 10 կիլոմետր դեպի հարավ է գտնվում հայկական վանքաշինության գլուխգործոցներից մեկը՝ Մաքենյաց վանքը, որը կառուցվել կամ վերակառուցվել է 9-րդ դարում, Սյունիքի իշխան Գրիգոր Սուփանի հովանավորությամբ: Մաքենավանքը վեր է բարձրանում Մաքենիս գետի կիրճի ժայռեղեն հրվանդանի վրա: Մաքենիսից հարավ է գտնվում մարզի ամենահեռավոր ու ամենաբարձրադիր գյուղը՝ Ախպրաձորը, որտեղից մոտ 20 կիլոմետր հեռավորությամբ, ծովի մակարդակից մոտ 3500 մետր բարձրության վրա, ծփում են Մեծ եւ Փոքր Ալ լճերը: Ախպրաձորի տարածքում հայ-իտալական հնագիտական միացյալ արշավախումբը 2010 թվականին հայտնաբերել եւ քարտեզագրել է հնագույն քաղաքի ավերակներ, որը պայմանականորեն կրում է Սաթենա անունը:

Վարդենիս քաղաքը միջնադարում կոչվել է Վասակաշեն: Այն կապվում է Սյունյաց Վասակ իշխանի անվան հետ: Քաղաքի երեւելի պատմական հուշարձանը Սուրբ Աստվածածին եկեղեցին է, որը կառուցվել է մեկ դար առաջ: Վարդենիսը համարվում է համաշխարհային հռչակի տեր գիտնական, աստղագետ Վիկտոր Համբարձումյանի ծննդավայրը: Նրա անունով է կոչվում քաղաքային զբոսայգին, որտեղ եւ տեղադրված է մեծահամբավ գիտնականի արձանը: Քաղաքում գործում են 4 միջնակարգ դպրոց, մեկ քոլեջ, հիվանդանոց, զինվորական հոսպիտալ, պոլիկլինիկա:

Սոթք գյուղը գտնվում է մարզի արեւելյան սահմանագլխին: Այստեղով է անցնում Վարդենիս-Մարտակերտ ճանապարհը կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ կապվող ցամաքային միակ գործող ճանապարհը: Սոթքը դարեր շարունակ համարվել է Դոփյան տան իշխանների նստավայրը: Այստեղ պահպանվել է միջնադարյան բազիլիկ եկեղեցին՝ վիմագիր արժեքավոր արձանագրություններով, գեղաքանդակ, յուրօրինակ խաչքարերով:

Մեծ Մասրիկը համարվել է Մելիք-Շահնազարյանների պատմական ոստանը միջին դարերում: Այստեղ պահպանվել է նրանց տոհմական գերեզմանոցը՝ բարձրարվեստ

քանդակներ կրող խաչքարերով: Այդ հուշարձանների խմբին Խորհրդային եւ հետխորհրդային տարիներին ավելացել են Մեծ հայրենականում եւ Արցախյան ազատամարտում զոհվածների հուշարձանները, մշակույթի տան եւ գյուղապետարանի շենքը, նորակառույց եկեղեցին:

Տուրիզմը

Զբոսաշրջությունը Գեղարքունիքի մարզում ձեւավորված ավանդույթներ եւ զարգացման լայն հնարավորություններ ունի: Դրան նպաստում են Սեւանա լիճը՝ բնության կողմից պարգեւ տրված առողջարանը, Խորհրդային տարիներին ստեղծված տուրիստական հանգրվաններն ու ենթակառուցվածքները, ինչպես նաեւ՝ բնության եւ պատմության հարուստ հուշարձանախմբերը: Մարզի տարածքը բավականին գրավիչ պայմաններ ունի ամառային ու ձմեռային տուրիզմի, գյուղական տուրիզմի ու լեռնագնացության համար: 2011թ Սեւանա լճի տարբեր հատվածներում կառուցվեց 5 հանրային լողափ: Ընթացքի մեջ են հանրային նոր լողափերի կառուցման ծրագրերը: Միջազգային չափանիշներին համապատասխան նոր հյուրանոցներ եւ տուրիստական հանգրվաններ են կառուցվում Սեւանա լճի հարավային, հյուսիսային եւ արեւմտյան ափերին:

Տուրիզմի զարգացումը Գեղարքունիքում նոր թափ է հավաքում վերջին 10-15 տարիների ընթացքում: Տուրիզմի զարգացման նոր հեռանկարներ է մարզի առջեւ բացել արդեն մոտ մեկ տասնամյակի պատմություն ունեցող համագործակցությունը Ֆրանսիայի Հանրապետության Իզեր մարզի դեպարտամենտալ խորհրդի հետ: Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքը համագործակցություն է հաստատել Սեւանի, Ռոման քաղաքը՝ Վարդենիսի հետ: Փոխադարձ շփումների եւ այցերի արդյունքում արդեն ձեւավորվել է կայուն համագործակցություն տուրիզմի, կրթության եւ առողջապահության ոլորտներում:

Սեւանա լճի հյուսիսային ափով մեկ, Արեգունու եւ Սեւանի լեռնաշղթաների ստորոտում, տարածվում են սահմանամերձ 10 գյուղական համայնք, որտեղ զբոսաշրջության համար աստիճանաբար բացվում են զարգացման նոր հեռանկարներ:

“Ավան-Մարագ’ հյուրանոցային համալիրը կառուցվել է 2001 թվականին՝ նոր շունչ հաղորդելով Ծափաթաղի եւ հարեւան համայնքների տնտեսական կյանքին: Այստեղ զբոսաշրջիկների հոսք է նկատվում աշխարհի ամենատարբեր մասերից: Լճի հրապույրները վայելելուց բացի, նրանք արշավ են կատարում Ծափաթաղի գիհու եւ կաղնու բնական անտառներ, մարզի այլ գրավիչ վայրեր:

Շորժան, որպես տուրիզմի գոտի, հայտնի է դեռեւս ԽՍՀՄ տարիներից:Պահպանված տուրիստական հանգրվանների կողքին այստեղ տարեցտարի վեր են բարձրանում ժամանակակից նոր հյուրանոցներ, հանգստյան տներ, առանձնատներ: Շորժայում, Փամբակում, Ջիլում, Դարանակում, Դրախտիկում, Արդանիշում, ափամերձ այլ բնակավայրերում աստիճանաբար վերելք է ապրում գյուղական տուրիզմը: Տասնյակ հազարավոր զբոսաշրջիկներ ամռան ամիսներին հյուրընկալվում են գյուղացիների կողմից հյուրերի համար հարմարեցված բնակարաններում, ծանոթանում հայկական կենցաղին, միջավայրին, մշակույթին, օգտվում հարուստ խոհանոցից:

Ճամբարակ քաղաքը գտնվում մարզի հյուսիսում Բնակավայրը հիմնադրվել է մոտ երկու դար առաջ, որի առաջին բնակիչները եղել են ռուս մոլոկանները: Նրանց կառուցած փայտաշեն եւ կղմինդրածածկ կտուրներով բնակարանների մեծ մասը, որոշակի ձեւափոխումներով, պահպանվել են մինչ այժմ:

Ճամբարակից դեպի հյուսիս ձգվում է Գետիկի սքանչելի ձորը: Այստեղ են գտնվում Թթուջուր, Գետիկ, Մարտունի, Այգուտ, Դպրաբակ, Ձորավանք, Կալավան-Բարեպատ, Անտառամեջ գյուղերը: Գետիկի ձորով է անցնում Ճամբարակ-Դիլիջան հիմնանորոգված ճանապարհը: Սա մարզի ամենացածր եւ ամենատաք կլիմա ունեցող գոտին է՝ տարածվելով ծովի մակարդակից 1325-1600 մետր բարձրություններում: Տարածքը նպաստավոր է այգեգործության, մեղվաբուծության եւ անասնապահության ու տուրիզմի զարգացման համար: Այստեղ է գտնվում մարզի բնական անտառների հիմնական մասը: Գետիկի արգելավայրում կան վայրի կենդանիների մի քանի տեսակներ, որոնք մտնում են Հայաստանի Կարմիր գրքում: Իսկ Հին Գետիկի վանքն անգամ ավերակների մեջ իր բացառիկ կոթողներով կարող է դասվել մեր պատմաճարտարապետական առաջատար հուշարձանների շարքերում:

Վերջին տարիների ընթացքում տուրիզմը լայն թափ է առել Կալավան համայնքում, որտեղ 'Թայմլենդ' հիմնադրամի նախաձեռնությամբ հիմնական շեշտը դրվում է էկո եւ հնագիտական տուրիզմների զարգացման ուղղությամբ:Տարվա ընթացքում Կալավան եւ շրջակա համայքներ են այցելում հազարավոր տուրիստներ աշխարհի ամենատարբեր երկրներից:

Տեղացի կամ օտար բնասերների, լեռնագնացների համար հանրաճանաչ վայրեր են Սեւանը գոտեւորող լեռնաշղթաների կիրճերը, ձորերը, ժայռախմբերը, սարահարթերը, որոնց մեջ առանձնահատուկ տեղ ունի Գռիձոր կոչվող վայրը, որը գտնվում է Սարուխան ու Գանձակ գյուղերի հարավ-արեւմտյան մասում: Այն հարուստ է բնության հետաքրքիր հուշարձաններով, քաղցրահամ ու հանքային աղբյուրներով, ալպյան փարթամ ու բազմազան բուսականությամբ, արագահոս գետակներով, որոնք ձեւավորում են Գավառագետի մի վտակը:

Գեղարքունիքի մարզում տարվա ընթացքում իրենց հանգիստը կամ ժամանցն են անցկացնում մի քանի հարյուր հազար տեղացի կամ արտասահմանցի հովեկներ ու զբոսաշրջիկներ: